

բարձրացած է. ան շատ բարձր է և բոլորանիստ, և իր շուրջը կը գտնուին ջրհորներ և ծառաստաններ, որ կը բերեն քաղցրահամ պտուղներ. կային այգիներ, որոնցմէ կը շինեն թագաւորական գինի, ձիթենիներ ևւ եղջիւրենիներ: Լերան գագաթէն քօլօր դաշտը առհասարակ յայտնի կ'երեւի. արեւելքի կողմէն՝ Յօրդանան, արեւմուտքէն՝ Մայդանապետոց աշխարհին ծովը, հիւսիսէն՝ Տիբեթիոյ ծովը, հարաւէն՝ Նաբովթի այգին. բոլոր երեւցած տեղերուն մէջ կը գտնուէին գիւղեր, ագարակներ և քաղաքներ: . . . Լերան արեւելեան կողմը՝ ուր Քրիստոս այլակերպեցաւ, Պետրոսի խօսքին համաձայն, իրարմէ հեռի երեք եկեղեցիներ շինուած են, և անոնք ունին շատ պաշտօնեաներ. առաքելիներ են՝ որոնք մարմնոյ կարօտութեան համար չէ որ կ'աշխատին, վասն զի անոնք մէկէ մը չեն ստացած ոսկի կամ արծաթ կամ հանգերձ: . . . Անոնցմէ իւրաքանչիւրը երկմատնի փայտատով մը հողը կը խարխարէ և անոր մէջ կը սերմանէ ցօրեն, գարի և ուրիշ սերմեր մարդոց ապրուստին համար. հասկերը երբ հասունան, ոտքերով կը չփն, և շեղջերուն արդիւնքը հօսելով՝ հովին կու տան ևւ ապա կը շտեմարանեն. իրենք՝ որ ցօրենը երկանով կ'աղան, ևւ մեծ տաժանքով կը պատրաստեն ամէն օրուան կերակրիկը, լոկ հաց ևւ ջուրը աղով կը համեմեն ևւ ատոր խորտիկ անուը կու տան: Զմեռ ատեն լեռան նիւը (բանջար մը) կը քաղեն ևւ աղով, ջրով ևւ զոպայով կը թթուեցնեն ևւ, ինչպէս իրենք կ'ըսեն, տաք օրերուն շատ օգտակար ըմպելի մ'է: . . . Իւզը կերակուրի համար չեն գործածեր, այլ երեք եկեղեցիներուն մէջ մշտապէս վառուող կանթեղներուն համար: Իրենց սափորին գինին միայն տէրունեան բաժակին կը գործածեն: . . . Հանապաղ չեն ճաշակեր, այլ իրենց սովորութիւն ունին՝ ամառ ատեն հանգչիլ ևւ երեկոները միայն ճաշել, իսկ ձմեռները շաթթուան կէսօրերուն: Իսկ անոնք որ աւելի տոկուն են՝ ամբողջ շաթթուան մէջ չեն ճաշակեր: Եթէ հեռի տեղերէ մէկը նոյն եղբայրներուն մօտ երթայ՝ անոնք սովորականը զանց կ'ընեն: Հոգեւոր կերակուրին համար շատ ըզգոյշ են, ևւ չեն ուզեր դադրիլ ճաշակել. թէպէտ ամէն ատեն անյադութեամբ կ'ուտեն, բայց աւելի կ'անօթեան ևւ ծարաւ կ'զգան: Ոչ միայն հարիւր յիսուն սողմոսները ձայնով կը կարգան, այլ նաև եկեղեցւոյ բովանդակ սուրբ կտակարանները, և